

զՅոհան եւ զՄիքայել եւ զՆերսէս վրդաւորսն եւ զայլ ընկերակիցս իմ որ ի գրեւն ձանձրութի վարկանիմ քանզի շնորհիւ ան յոյժ բազումք են: Նաեւ զգրողս սորին Թաթէոսն եւ զԵրզնանէսն, աղաչեմ յիշել ի քն: Նաեւ միմնաւոր ծնողսն իմ զՎարդան եւ զԹուրվանտէն, որք կարի ծերացեալ են: Այլ եւ զեղբայրն իմ եւ զաշակերտ զԳալուստան մաղթեմ յիշել ի քն որ տարածամ հասակի փոխեցաւ առ տր եւ սուք մեծ եթող ծերացեալ ծնողացս եւ ինձ իսկ զբլտովին: Եւ որք ըզմեզ յիշեն յիշեալ լիցին ի քն որ է օհլ յաւիտեանս ամէն:

10.

ՍԻՄԷՈՆ ՋՈՒՂԱՅԵՅԻ

Ձեռ. էջմ. N 1881|1742(1)

Փառք եւ զոհութի անսկզբնական էին եւ բնաւից պատճառին բոլորից եղականաց գոյից էացուցչին եւ վայելչայարմար ըստ իւրաքանչիւր կարգի եւ տեսակի նախախնամողին եռակի տարորշեալ եւ յատկացեալ անձանցն եւ զիմացն եւ եզակի միական բնութեն եւ էութեն պաշտելի եւ երկրպագելի տրութեն, անսահման նախազաղափարին եւ անեղ բարեոյն առաջին: Հօր անձնի եւ անսկզբնականի եւ անժամանակ յիւրմէ ծնիցելոյն բանի. եւ անհատաբար բղիցեցելոյն սիրոյ, համագոյ բնութք եւ անորոշ բաժանմամբ միացեալ եւ զիմօք առանձնացեալ եւ անձամբ յատկացեալ. անուր եւ աներբ, ընդ անմ թափանցեալ եւ յամէնից զատեալ, յընդհանուրս կայացեալ եւ ոչ ուրեք ներփակեալ եւ կամս սորա սեղմեալ, յարարածս եւ արտաքոյ սորա: Որ եւ լուութք պատուեալ եւ պատուի եւ պատուեսցի ի բոլորից գոյից, յաւիտենից յաւիտենիւ եւ մշտնջենաւոր դարիւ, անհուն քանակութք եւ անկետ պայմանաւ, որ էր եւ է եւ եղիցի աւրհնեալ անվախճանապէս. ամէն:

Յորմէ շնորհէ սատարեալ յանգեալ աւարտեցաւ տառս մակացական եւ գիծս ի-

մաստասիրական արտագրութիս, փիղիսոփայական, եւ ասացուածս նըրբաճառական: Յամի հազարերորդի հարիւրերորդի եւ երկրորդի բուահաւուրք արամագենս, ըստ հոլովման մեծի չափողին եւ պատճառին ամանակի, ի մարգաց ամսոյ . . (Թոմէ Գեղեքաց). եւ ի յօգոստոսի ըստ հը/ոսմայե

Յոսոյն քսան եւ մէկ: Առ հովանեաւ լուսանչր եւ տիեզերածաւալ գերագահ սք արթոսյ էջմիածնի: Յորում միջի կայաւորեալք են բազմութիւք եղբարց կուսակրօնից իբրեւ յիսնեակ թուով. միշտ յանձաշունչ զիրս պարագեալք եւ յար ի քնութիս (sic) բնախօսական տառից կրթեալք: Ունելով զլուխ եւ առաջնորդ ուսմնս յայտրիկ զմեծ հեռորն եւ անյաղթ փիլիսոփոսն ամենափոխականի հողոյն ընդունարանն. եւ զի՞նչ եթէ ոչ երկրորդ Գաւթ եւ Մովսէս շնորհեալ ազգիս մերում. Սիմեոն ասեմ, զմայլեալն առաւար ի վերնական զեղմանէն, յորմէ ուսնացան յօգուք քերթողութե արուեստիւ, եւ արտաքին գրոց տեղեկութք եւ նմախօս տառից ծանօթացան, ըստ որում պատճառի եւ զգիրս գայս ստացայ: Քանզի ըստ յաւետանակ իմաստութե մտաց իւրոց պարզագոյն իմացուածով քերականութի յօրինեաց եւ ուսոյց անմ ումք: Գոլով զաւառաւ Ջուլիայեցի, որ այժմ ի Շօք քաղաքի բլ: Եակեալ են արքայարանի Պարսից. աշակերտ եռամեծին եւ բազմերջանիկ վարդապետին Սաչատրոյ: Արդ սկիզբն այսր զիտութե եղեւ խստակրօն եւ ճգնազգեաց վարդապետն Մելքիսէթ, որ էր յԱրարատեանս զաւառէ, եւ ի նմանէ ծանօթացաւ սա, բայց սակայն բազմապատկարար առաւելաւ զիտութք սասակս յոյժ առատութե մտց իւրոց՝ ո՞նչ եւ քերականութե իրողութե, որում ոչ ոք երբէք էր տեղեակ յազգէս մերմէ, ի վաղուց հետէ մինչե ցայսօր ամանակի ըստ այսմ: Ուստի եւ որքանութի իմաստուե սորայ սովաւ ծանուցանի այնոցիկ մտաց, որք իսկապս կարեն բայցորչլ զգիտաւորութի քերթողութես: Այլ մեք գարձ՝ ւք ի կարգ անկեալ բանիս զոր սկսաք:

Արդ զոլով այցելու եւ զիտապետ տոհմիս հայկական, երջանիկ եւ ճգնազգեաց իմն արտասանեալ՝ Տեր Փիլիպպոս բան ջախից մակագրեալ, որ արգարեւ ըստ անուան իւրոյ փայլէ յաւուրս յայսօսիկ իբրեւ ա-

(1) Թէեւ ամբողջ յիշատակարանը Սիմեոն Ջուլիայեցուն չի վերաբերում. այլ միայն որոշ մասեր, բայց բովանդակութեան կարեւորութեան համար տալիս ենք լրիւ:

ՌՀԶ

ՌՀԷ